

Եկեղեցւոյ Հաւատամքը

Ա- Կը հաւատանք

Սբ. Գրութիւններու ներշնչումին (Ք. Տիմոթէոս 3.16), անոնց կատարեալ հեղինակութեան, բնագրի անսխալականութեան: Զայն կ'ընդունինք կեանքին, անհատին, ինչպէս նաեւ եկեղեցիին գործունէութեան իբրեւ միակ անսխալական օրէնքը:

Բ- Կը հաւատանք

Հօր Աստուծոյ, Անոր ամենակարողութեան, Անոր յաւիտենականութեան, իմաստուն եւ կատարեալ ողորմութեան: Կը հաւատանք որ Ան տիեզերքի գերագոյն Արարիչն ու Տէրն է:

Գ- Կը հաւատանք

Աստուծոյ որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի մեր Տիրոջը, Անոր յաւիտենական նախագոյութեան, մարդեղինութեան, հրաշալի ծնունդին, փրկագործութեան: Յիսուս Քրիստոս Աստուծոյ միածին որդին է, Սբ. Հոգիէն յղացուած, ծնած կոյս Մարիամէն, Ան ապրած է աշխարհի վրայ իբրեւ կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ:

Կը հաւատանք Անոր քաղցր (expiatoire) արեան (Ա. Յով. 1.7):

Կը հաւատանք, որ մեռաւ Ան մեր փոխարէն (Ա. Կորն. 15.3):

Կը հաւատանք Անոր մարմնաւոր յարութեան, մարմնաւոր փառաւոր համբարձման: Ներկայիս, նոյն մարմնով Ան երկինքն է, Հայր Աստուծոյ աջը բազմած: Նոյն մարմնով պիտի վերադառնայ մեռածներն ու ողջերը դատելու:

Կը հաւատանք, որ Աստուծոյ եւ մարդկանց միջեւ միակ միջնորդն է (Ա. Տիմոթէոս 2.5), միակ բարեխօսն է բոլոր անոնց, որոնք իր անուանը կը հաւատան (Ա. Յովհ. 2.1):

Կը հաւատանք, որ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդը մեղքի մէջ իյնալով կորսուած է եւ դատապարտուած (Հռովմ. 3.23): Բայց ձրիաբար կ'արդարանայ ան՝ որ կը հաւատա Յիսուս Քրիստոսի առանց որ գործերը ռեւէ շնորհի փոխանցեն. այսուամենայնիւ, այդ գործերը հաւատքին անհրաժեշտ պտուղներն են (Հռովմ. 5.1 եփես. 2.10):

Դ- Կը հաւատանք

Սուրբ Հոգիին, Անոր աստուածութեան, Յիսուս Քրիստոսի հաւատացողներուն սրտին մէջ Անոր բնակութեան եւ եկեղեցիին մէջ Անոր գործունէութեան: Ան կը համոզէ մեղաւոր աշխարհը (Յով. 16.8), մեղաւորը կ'առաջնորդէ ապաշխարհութեան, դարձի եւ սրբագործութեան, որպէսզի ան յաղթական կեանք մը վարէ եւ կամաւորապէս ծառայէ Աստուծոյ: Իր եկեղեցին յատկութիւններով կ'օժտէ եւ գայն կը պատրաստէ «Փառաց Աստուծոյ» հանդիպումին:

Ե- Կը հաւատանք

Տիեզերական Եկեղեցւոյ, Քրիստոսով փրկուածներուն, որոնք Անոր մարմինն են:

Կը հաւատանք տեղական Եկեղեցւոյ, այն աստուածոյն հաստատութեան, որ անհրաժեշտ է Քրիստոսի վկայութիւնը պահպանելու, Աւետարանին հաւատքը տարածելու եւ հաւատացեալներու սրբագործումը իրագործելու:

Կը հաւատանք սուրբերու (հաւատացեալներու) հաղորդակցութեան:

Կը հաւատանք Յիսուս Քրիստոսի վերագալուստին եւ Անոր վերջնական փառաւոր թագաւորութեան:

Զ- Կը հաւատանք

Աստուծոյ հրեշտակներուն (Եբր. 1.14), ինչպէս նաեւ Սատանային եւ դեւերուն գոյութեան:

Է- Կը հաւատանք

Վերջին դատաստանին օրը մարդոց մարմնական յարութեան, մեղաւորներու յաւիտեանական պատժուելուն եւ վերստին ծնունդ ունեցողներուն խոստացուած յաւիտեանական կեանքին:
